ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՆԳՀԱՇՁԲ-19/6

ք. Երևան «26» 07 2019թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԱԳԼ Գրուպ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Գևորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 40-րդ օրացուցային օրը ներառյալ:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 4 Հավելվածում:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 4950000 (չորս միլիոն ինը հարյուր հիսուն) ՀՀ դրամ, այդ թվում 825000 (ութ հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ-ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[30]

Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Ք. Երևան, Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900013000543
ՀՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար

------------------------------ Ն.
Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

<<ԱԳԼ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ
ք. Երևան, Բակունցի 4/35
<<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ>> ՓԲԸ,
Նոր Նորք մ/ճ
Հ/Հ 220463332001000
ՀՎՀՀ 00911479
Տնօրեն Կ. Գևորգյան

------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված թիվ 1*
*,26 ե ,07 ե 2019թ. կնքված*
*ՀՀԿԳՆԳՀԱՇՁԲ-19/6 ծածկագրով պայմանագրի*

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
<<Կապանի N13 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի մեկ սենյակի և մեկ սանհանգույցի
հիմնանորոգման աշխատանքների կատարման

| NN | Աշխատանքների անվանումը | չ/մ | ծավալը | Միավորի արժեքը /հազ դրամ/ | Ընդամենը /հազ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | Շինարարական աշխատանքներ | | | | |
| | Քանդման աշխատանքներ | | | | |
| 1 | Փայտե դռների քանդում | մ$^2$ | 3,290 | 1,193 | 3,92 |
| 2 | Սանհանգույցի դռան բացվածքի համար միջնապատի քանդում 10 սմ հաստ. | մ$^3$ | 3,106 | 8,121 | 25,22 |
| 3 | Մանրահատակի քանդում շրիշակների հետ միասին | մ$^2$ | 52,700 | 0,185 | 9,73 |
| 4 | Խեցեսալե հատակների քանդում | մ$^2$ | 10,230 | 0,429 | 4,39 |
| 5 | Ցեմենտավազե հարթաշերտի քանդում H=60մմ | մ$^2$ | 10,230 | 0,579 | 5,92 |
| 6 | Պատերի վրայից հին ներկի մաքրում | մ$^2$ | 88,200 | 0,152 | 13,45 |
| 7 | Առաստաղի վրայից հին ներկի մաքրում | մ$^2$ | 52,700 | 0,152 | 8,04 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 8 | Փայտե պատուհանների քանդում պատուհանագոգերով | մ$^2$ | 16,448 | 1,865 | 30,67 |
| 9 | Թուջե ջեռուցման մարտկոցների քանդում /պահեստավորում հետագա տեղադրման համար/ / 18 սեկց / | 1 մարտ | 3,000 | 1,194 | 3,58 |
| 10 | Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ | տն | 7,955 | 2,675 | 21,28 |
| | Վերանորոգման աշխատանքներ | | | | |
| | Պատեր,միջնապատեր և միջնորմներ | | | | |
| 11 | Միջնորմների շարվածք 400x200x100մմ թեթև բետոնե բլոկներից (18,6մ$^2$) | մ$^3$ | 1,860 | 34,176 | 63,57 |
| 12 | Շարվածքի ամրանավորում Ф8AcI և Ф8A500C դասի ամրանով | տն | 0,037 | 570,018 | 21,20 |
| 13 | Միաձույլ ե/բ բարավորների պատրաստում B-15 դասի բետոնից | մ$^3$ | 0,029 | 68,152 | 1,98 |
| 14 | Ամրան AcI դասի (Ф6) | տն | 0,0015 | 500,181 | 0,75 |
| 15 | Ամրան A500C դասի (Ф12) | տն | 0,0045 | 488,385 | 2,20 |
| | Դռներ, պատուհաններ | | | | |
| 21 | Մետաղապլաստե պրոֆիլներով, սպիտակ գույնի | մ$^2$ | 4,932 | 44,115 | 217,58 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | պատուհաններ, թափանցիկ երկտակ 4x4 մմ ապակեփաթեթով, ներառյալ սարքերը, տեղափոխումը և տեղադրումը գնի մեջ (եվրոպական), բացվող | | | | |
| 22 | Մետաղապլաստե պրոֆիլներով, սպիտակ գույնի պատուհաններ, թափանցիկ երկտակ 4x4 մմ ապակեփաթեթով, ներառյալ սարքերը, տեղափոխումը և տեղադրումը գնի մեջ (եվրոպական), չբացվող | $մ^2$ | 11,516 | 31,840 | 366,67 |
| 23 | Պլաստմասսայե, սպիտակ գույնի պատուհանագոգերի տեղադրում 40սմ լայնությամբ | $մ^2$ բացված | 3,920 | 1,375 | 5,39 |
| 24 | Պատուհանագոգի արժեքը | գմ | 9,800 | 6,045 | 59,24 |
| 25 | Արտաքին բազալտե սալից 30մմ հաստ. պատուհանագոգ 20 սմ լայնությամբ 9.4 մ | $մ^2$ | 1,880 | 16,185 | 30,43 |
| 26 | Ներքին դռներ դարչնագույն ՄԴՖ-ից 16մմ հաստությամբ փայտե կարկասով (եվրոպական) | $մ^2$ | 2,100 | 55,455 | 116,46 |
| 27 | Մետաղապլաստե պրոֆիլներով, սպիտակ գույնի դուռ, խուլ, ներառյալ սարքերը, տեղափոխումը և տեղադրումը գնի մեջ (եվրոպական) | $մ^2$ | 2,100 | 47,469 | 99,69 |
| | Հատակներ | | | | |
| 28 | Ցեմենտավազե հարթաշերտ H=40մմ | $մ^2$ | 62,930 | 1,771 | 111,45 |
| 29 | Հատակների երեսպատում կերամիկական սալիկներով ոչ պակաս 6մմ հաստ., սոսնձով | $մ^2$ | 10,230 | 11,203 | 114,61 |
| 32 | Հատակների երեսպատում լամինատե 12.5 մմ հաստ. սալերով, սպունգը և շրիշակները ներառյալ | $մ^2$ | 52,700 | 10,265 | 540,95 |
| | Հարդարման աշխատանքներ | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 30 | Գաջե սվաղի վերանորոգում 20% չափով /88.2 մ2/ | $մ^2$ | 17,640 | 2,503 | 44,16 |
| 31 | Պատերի բարելավված սվաղ ցեմենտավազե շաղախով | $մ^2$ | 42,150 | 1,677 | 70,70 |
| 32 | Պատերի երեսապատում հաղճասալերով ոչ պակաս 6մմ հաստ., սոսնձով | $մ^2$ | 42,150 | 13,506 | 569,27 |
| 34 | Պատերի, շեպերի ներկում լատեքսային ներկով, ծեփամածկմամբ | $մ^2$ | 130,350 | 1,782 | 232,33 |
| 35 | Առաստաղի ներկում լատեքսային ներկով, ծեփամածկմամբ | $մ^2$ | 52,700 | 1,907 | 100,49 |
| 36 | Թուջե մարտկոցների լվացում և տեղադրում /սեկց 18/ | կոմպ | 3,000 | 3,184 | 9,55 |
| 37 | Կախովի առաստաղի իրականացում պլաստմասե պրոֆիլներով, մետաղական կարկասով | $մ^2$ | 10,230 | 6,404 | 65,51 |
| 38 | Սանհանգույցում զուգարանակոնքի և լվացարանի մոտ բռնածողի տեղադրում, նիկելապատ | գմ | 1,800 | 5,565 | 10,02 |
| | Արտաքին աշխատանքներ | | | | |
| 39 | Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում մուտքի դիմաց 6,84$մ^2$ | $մ^3$ | 0,550 | 4,081 | 2,24 |
| 40 | Թեքահարթակների կառուցում բունաբետոնով B 15 դասի բետոնից | $մ^3$ | 1,550 | 47,710 | 73,95 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 41 | Թեքահարթակի երեսապատում բազալտե սալերով 30մմ հաստ. | մ² | 10,100 | 15,656 | 158,12 |
| 42 | Թեքահարթակի ճաղավանդակի իրականացում | գմ | 10,000 | 20,029 | 200,29 |
| | **Ներքին ջրամատակարարման ցանց** | | | | |
| 1 | Պոլիպրոպիլենային, խողովակաշարի տեղադրում Ф20x2.3մմ,լվացումով, քլորացումով ,փորձարկումով | գմ | 10,000 | 2,529 | 25,29 |
| 2 | Փականների տեղադրում Ф15մմ | հատ | 3,000 | 4,251 | 12,75 |
| 3 | Լվացարանի ծորակի տեղադրում | հատ | 1,000 | 25,082 | 25,08 |
| 4 | Պոլիպրոպիլենային խողովակների ձևավոր մասեր | հատ | 8,000 | 0,113 | 0,91 |
| 5 | Միացում գործող ջրագծին D20x2.3մմ | տեղ | 1,000 | 6,446 | 6,45 |
| 6 | d=15-32 մմ խողովակաշարի ապամոնտաժում | գմ | 10,000 | 0,327 | 3,27 |
| 7 | Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ | տն | 0,015 | 2,675 | 0,04 |
| | **Ներքին կոյուղու ցանց** | | | | |
| 1 | Կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում պատերի վրա Ф110մմ /փորձարկումով/ | գմ | 6,000 | 1,911 | 11,46 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 2 | Կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում պատերի վրա Ф50մմ /փորձարկումով/ | գմ | 4,000 | 1,212 | 4,85 |
| 3 | Զուգարանակոնքի տեղադրում | հատ | 1,000 | 81,147 | 81,15 |
| 4 | Լվացարանի տեղադրում | հատ | 1,000 | 66,569 | 66,57 |
| 5 | Հոսակի տեղադրում Ф50մմ | հատ | 1,000 | 8,409 | 8,41 |
| 6 | Լվացարանի ապամոնտաժում | հատ | 2,000 | 0,480 | 0,96 |
| 7 | Զուգարանակոնքի ապամոնտաժում | հատ | 2,000 | 0,592 | 1,18 |
| 8 | d=50-100 մմ կոյուղու թուջե խողովակաշարի ապամոնտաժում | գմ | 10,000 | 0,838 | 8,38 |
| 9 | Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ | տն | 0,450 | 2,675 | 1,20 |
| 10 | Պոլիվինիքլորիդե անկյունակ D50մմ | հատ | 2,000 | 1,080 | 2,16 |
| 11 | Պոլիվինիքլորիդե անկյունակ D100մմ | հատ | 1,000 | 1,434 | 1,43 |
| 12 | Պոլիվինիքլորիդե մաքրիչ D50մմ | հատ | 1,000 | 1,559 | 1,56 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 13 | Պոլիվինիքլորիդե անցում D100-50մմ | հատ | 2,000 | 1,219 | 2,44 |
| 14 | Պոլիվինիքլորիդե եռաբաշխիկ D50մմ | հատ | 1,000 | 1,694 | 1,69 |
| 15 | Պոլիվինիքլորիդե եռաբաշխիկ D100մմ | հատ | 1,000 | 2,204 | 2,20 |
| 16 | Պոլիվինիքլորիդե քառաբաշխիկ D100մմ | հատ | 1,000 | 1,810 | 1,81 |
| 17 | Միացում կոյուղագծին | տեղ | 1,000 | 11,895 | 11,90 |
| | **Օդափոխություն** | | | | |
| 1 | Ուղղանկյուն օդատարի անցկացում ցինկապատ պողպատից d=0.7մմ 200x150մմ | $մ^2$ | 8,5 | 7,587 | 64,49 |
| 2 | Անցքերի բացում ծածկերում 200x150մմ | հատ | 4,000 | 3,756 | 15,03 |
| 3 | Անցքերի բացում պատերի մեջ 200x150մմ L=500մմ | տեղ | 1,000 | 0,955 | 0,96 |
| 4 | Օդի արտածման ճաղավանդակներ 150x150մմ | հատ | 1 | 3,054 | 3,05 |
| 5 | Ցինկապատ պողպատից հովանոց տանիքում 300x250մմ | հատ | 2,000 | 15,793 | 31,59 |
| 6 | Օդատարի ապամոնտաժում | $մ^2$ | 3,000 | 0,809 | 2,43 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| | Էլեկտրատեխնիկական աշխատանքներ | | | | |
| 1 | Լուսակալ LED Panel Light 300x300մմ չափերով, 18վտ հզորությամբ, լամպերը կոմպլեկտի մեջ CCK-4000K | հատ | 15,000 | 16,276 | 244,14 |
| 2 | Լուսակալ առաստաղի LED լամպով 1x8վտ հզորությամբ | հատ | 3,000 | 9,906 | 29,72 |
| 3 | LED լամպ 8վտ հզորությամբ | հատ | 3,000 | 1,132 | 3,40 |
| 4 | ПВ 1x2.5մմ հաղորդալարի անցկացում | գմ | 120,000 | 0,268 | 32,18 |
| 5 | Խողովակ PVC-20մմ արտաքին տրամագծով | գմ | 30,000 | 0,409 | 12,28 |
| 6 | Երկստեղնավոր անջատիչների տեղադրում | հատ | 1,000 | 1,709 | 1,71 |
| 7 | Անջատիչների տեղադրում | հատ | 1,000 | 1,494 | 1,49 |
| 8 | Վարդակների տեղադրում հողանցման կոնտակտով | հատ | 5,000 | 2,029 | 10,14 |
| | **Ընդամենը** | | | | **4150,75** |
| | **Շահույթ** | 11% | | | 456,58 |
| | **Ընդամենը** | | | | **4607,33** |
| | **Չնախատեսված ծախսեր** | 1,5% | | | 69,11 |
| | **Ընդամենը** | | | | **4676,44** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ԱԱՀ | 20% | | | 935,29 |
| Ընդամենը | | | | 5611,73 |

*Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Սյունիքի մարզ, Կապան Ձորքի թաղամաս, 3 շենք հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ս. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Կ. Գևորգյան
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված թիվ 2*
*«26» «07» 2019թ. կնքված*
*ՀՀԿԳՆԳՀԱՇՁԲ-19/6 ծածկագրով պայմանագրի*

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
<<Կապանի N13 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի մեկ սենյակի և մեկ սանհանգույցի
հիմնանորոգման աշխատանքների կատարման

| N | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետ | |
|---|---|---|---|
| | | Սկիզբ | Ավարտ |
| 1 | <<Կապանի N13 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի մեկ սենյակի և մեկ սանհանգույցի հիմնանորոգման աշխատանքներ | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 40-րդ օրացուցային օրը ներառյալ |
| | Ընդամենը | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 40-րդ օրացուցային օրը ներառյալ |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------------- Ն. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

---------------- Կ. Գևորգյան
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 3*
*«26» «07» 2019թ. կնքված*
*ՀՀԿԳՆԳՀԱՇՁԲ-19/6 ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ <<Ներառական կրթության համակարգի հզորացում Հայաստանում>> ծրագրի 5113 հոդվածից ըստ ամիսների, այդ թվում | | | | | | |
| | | | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | Դեկտեմբեր (մինչև դեկտեմբերի 20-ը) | Ընդամենը |
| 1 | 45611100/6 | <<Կապանի N13 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի մեկ սենյակի և մեկ սանհանգույցի հիմնանորոգման աշխատանքներ | | 2643300 | 4950000 | 4950000 | 4950000 | 4950000 | 4950000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ն. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Կ. Գևորգյան
/ստորագրություն/
Կ.Տ.

*Հավելված N 4*
*«26» «07» 2019թ. կնքված*
*ՀՀԿԳՆԳՀԱՇՁԲ-19/6 ծածկագրով պայմանագրի*

**<<Կապանի N13 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի մեկ սենյակի և մեկ սանհանգույցի հիմնանորոգման աշխատանքների ընթացքում շինարարական նյութերին և կոնստրուկցիաներին ներկայացվող պահանջներ**

<<Կապանի N13 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի մեկ սենյակի և մեկ սանհանգույցի հիմնանորոգման աշխատանքների կատարման ընթացքում շինարարական նյութերը և կոնստրուկցիաները պետք է ունենան մեկ տարվա երաշխիքային ժամկետ:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| ------------------- Ն. Հարությունյան | ------------------- Կ. Գևորգյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |